ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
«ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-20/22» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Հրազդան **10.06.2020թ.**

Մասնակցությամբ՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Սաֆարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Բաբայան
Ա. Զաքարյան
Գ. Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ք. Բաղդասարյան

1. ՏՎՅԱԼՆԵՐ ԳՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՇՈՒՐՋ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.Ղեկավարվելով <<Գնումների մասին օրենքի>> 38-րդ հոդվածի 1-ին մասի ինչպես նա և 15-րդ կետի 6-րդ ենթակետի դրույթներով, առաջնորդվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, հրավիրվել էին միաժամանակյա բանակցություններ՝ գների նվազեցման շուրջ:

1.1 08 հունիս 2020թ. ժամը 11:00 ին նշանակված բանակցություններին ներկա էր **<<Հրազդանի ՃՇՇՁ>> ԲԲ Ընկերության** ներկայացուցիչը, որը գնային առաջարկը նվազեցրեց՝ առաջարկելով 29 995 000/քսանինը միլիոն ինը հարյուր իննսունհինգ հազար/ ՀՀդրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2. <<ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-20/22>> ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից գնահատումները armeps.am համակարգում, <<ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-20/22>> ծածկագրով հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից հայտարարել <<Հրազդանի ՃՇՇՁ>> ԲԲԸ-ին, վերջինիս առաջարկելով << Հրազդան համայնքի ներհամայնքային ճանապարհների եվ փողոցների երթևեկելի մասերի փոսային նորոգման աշխատանքների >> կատարման պայմանագիր կնքելու առաջարկ:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին

3.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

3.2 <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետ չի կիրառվում :

3.3 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով նրան 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել բանկային երաշխիք՝ պայմանագրի ապահովում, կնքվելիք պայմանագրի 10/տաս/ տոկոսի չափով և բանկային երաշխիք ՝ որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի 100/հարյուր/ տոկոսի չափով:

4. Հանձնաժողովի հերթական նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 << **ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-20/22**>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ հաշվետվության հաստատման մասին նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 10:00-ին ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք հասցեում :

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Վ.Սաֆարյան

Անդամներ՝ ---------- Ա.Բաբայան

---------- Գ.Հակոբյան

---------- Ա.Զաքարյան

Գնահատող հանձնաժողովի
Քարտուղար ---------- Ք.Բաղդասարյան